ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԸ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԸ ԵՎ ՀԱՄԱՎԱՐԱԿԸ

Ռուզաննա ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

2014 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն և ընդունվել ասպիրանտուրա: 2018 թ. աշխատում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնում և սովորում է Texas A&M համալսարանի Ագրոբիզնեսի մագիստրատուրայում: Վերապատրաստումներ է անցել աշխարհի տարբեր երկրների համալսարաններում:

Հիմնաբառեր. *մարդկային կապիտալ, ներուժ, ցուցանիշ, COVID-19, ազդեցություն*

Հոդվածը նվիրված է Հայաստանի մարդկային կապիտալի և մարդկային ներուժի ուսումնասիրությանը: Այդ նպատակով վերլուծվել են մարդկային կապիտալի և մարդկային ներուժի զարգացման համաթվերն իրենց բաղադրիչներով: Կատարվել է համեմատություն Հայաստանի, ԱՊՀ մյուս և հարևան երկրների միջև: Հայաստանում մարդկային կապիտալի վրա բացասաբար է ազդել հատկապես դպրոցական կրթության ցածր որակը: Ցավոք, համավարակը ևս խթանելու է առկա խնդիրների խորացումը, ինչի հետևանքով ամբողջ աշխարհում կգրանցվի մարդկային կապիտալի և մարդկային ներուժի զարգացման մակարդակի անկում: Իսկ թե որքան ցավոտ կլինի այդ անկումը յուրաքանչյուր երկրի համար, կախված է տվյալ երկրի՝ համավարակի դեմ մղվող պայքարի արդյունավետության աստիճանից:

Մասնագիտական հրապարակումներում և հասարակական քննարկումներում հաճախակի կարելի է հանդիպել մեր հանրապետությունում բարձր որակավորում ունեցող աշխատուժի առկայության վերաբերյալ պնդումների: Թե որքանով են դրանք համընկնում իրականությանը, կարող ենք տեսնել՝ հիմնվելով որոշակի չափումների, համաթվերի վրա, որոնք, քննադատության արժանի բազմաթիվ կողմերով հանդերձ, գոնե այլ պետությունների հետ համեմատման հիմք են տալիս: Նմանօրինակ չափումներից են ՀԲ-ի կողմից հրապարակվող Մարդկային կապիտալի (ՄԿՀ) և ՄԱԿ-ի կողմից հրապարակվող Մարդկային ներուժի զարգացման համաթվերը (ՄՆԶՀ):

Իսկ ի՞նչ է մարդկային կապիտալը: Դա մարդու՝ որպես հասարակության անդամի սեփական արտադրողական ներուժն իրացնելուն անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների և առողջության «փաթեթն» է: Այսպիսով՝ ՄԿՀ-ն գալիք սերնդի աշխատանքի արտադրողականության արտահայտությունն է՝ ըստ լիարժեք կրթության և կատարյալ առողջության հենանշի (benchmark): Այլ կերպ ասած, դա չափում է մարդկային կապիտալի մեծությունը, որին այսօր ծնված երեխան կարող է ակնկալել, որ կհասնի մինչև 18 տարին լրանալը[1]: Հետևաբար՝ մարդկային կապիտալը նաև ամենակարևոր «հումքն» է տեխնոլոգիական նորարարության (ինովացիայի) և երկարաժամկետ աճի ապահովման համար: Եվ եթե ցանկանում ենք պատկերացում կազմել, թե բարձր տեխնոլոգիաների զարգացման ինչ ներուժի ենք տիրապետում և ապագայի համար ինչ նշաձող կարող ենք սահմանել, նախևառաջ, պետք է ունենանք մեր «հումքի»՝ իրականությանը մոտ պատկեր:

Այսպիսով, ըստ ՀԲ վերջին՝ 2018 թ. հրապարակման, Հայաստանը մարդկային կապիտալի համաթվով (0.57 միավոր) 157 երկրի շարքում զբաղեցրել է 78-րդ հորիզոնականը: Իսկ դա նշանակում է, որ այսօր ծնված երեխան ապագայում ընդամենը 57%-ով արտադրողական կլինի, այսինքն՝ 43%-ով պակաս արտադրողական, քան կարող էր լինել, եթե ստանար ամբողջական կրթություն և լիներ լիարժեք առողջ: Ցուցանիշը ստանդարտացված է և գտնվում է 0-1 միջակայքում: Բնականաբար, որևէ երկիր, նույնիսկ առաջին հորիզոնականում գտնվող Սինգապուրը, առավելագույն 1 միավորը չի ստացել (վերջինիս ցուցանիշ 0.88 է):

ՄԿՀ-ը երեք բաղադրիչի՝ մինչև 5 տարեկանն ապրելու հավանականության, կրթության ու առողջության ցուցանիշների արտադրյալն է: Համաթվի բոլոր ցուցանիշները և ԱՊՀ երկրների (Բելառուսի և Ուզբեկստանի տվյալները բացակայում են) արդյունքները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Ընդհանուր առմամբ, համաթիվը ներառում է 5 ցուցանիշ՝ մինչև 5 տարեկանն ապրելու հավանականություն, մինչև 18 տարին լրանալը ուսումնառության սպասվող տարիների թիվ, ներդաշնակեցված թեստերի միավոր, չափահասների կյանքի սպասվող տևողություն և մինչև 5 տարեկան թերաճ չհամարվող երեխաների տոկոս:

Ինչպես երևում է աղյուսակից, Հայաստանը ներդաշնակեցված թեստերի բավական ցածր միավոր ունի: Այս ցուցանիշը 300-625 միջակայքում է: Մեր երկիրն իր 443 միավորով զիջում է նույնիսկ ԱՊՀ երկրների միջինին (470 միավոր): Իսկ դա նշանակում է, որ մեզանում դպրոցական կրթության որակը ցածր է ԱՊՀ մյուս երկրների համեմատ: Հատկանշական է, որ այստեղ հաշվի է առնվել ոչ միայն ուսումնառության տարիների թիվը, այլև թե ինչ են սովորել աշակերտներն այդ ընթաց-

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Մարդկային զարգացման համաթիվն ԱՊՀ երկրներում

Երկիր	Մինչև 5 տ. ապրելու հավանականություն	Ուման սպասվող տևողություն	Ներդաշնակեցված թեստերի միավոր	Ուման սպասվող տևողություն՝ ճշգրտված որակով	Ոչ թերաճ երեխաների տեսակարար կշիռ	Չափահասների ապրելիության ցուցանիշ	ՄԿՀ
Հայաստան	0,99	11,1	443	7,9	0,91	0,88	**0,57**
Ադրբեջան	0,98	11,6	472	8,7	0,82	0,87	**0,60**
Ղազախստան	0,99	13,3	537	11,5	0,92	0,80	**0,75**
Ղրղզստան	0,98	12,6	420	8,4	0,87	0,82	**0,58**
Մոլդովա	0,98	11,8	436	8,2	0,94	0,83	**0,58**
Տաջիկստան	0,97	10,8	444	7,7	0,73	0,87	**0,53**
Ռուսաստան	0,99	13,8	538	11,9	..	0,78	**0,73**

[1] The Human Capital Project, International Bank for Reconstruction and Development / The World Bank, 2018, p 2, pdf p 9, https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/30498/33252.pdf?sequence=5&isAllowed=y&fbclid=IwAR3773unPx3Uj92U3gJfBnipriHwsbmN08erhqxkuIx1RG6-XDYrD6nMfMA

քում: Ուստի հաշվարկվում է նաև ուսումնառության տարիների թիվը՝ ճշգրտված որակով: Այսպես՝ հայաստանցի երեխան, որն ակնկալում է սովորել 11.1 տարի, իրականում, հաշվի առնելով իր ստացած գիտելիքի ծավալը, ստանում է ընդամենը 7.9 տարվա կրթություն. տարբերությունը՝ 3.2 տարի: Այսինքն՝ աշակերտը ստանում է 7.9 տարվան համարժեք գիտելիք, մինչդեռ դպրոց է հաճախում 3.2 տարի ավելի ժամանակահատված: Սա, թերևս, մեր կրթական համակարգի իրական գնահատականն է: Կարծում ենք՝ այդ տարբերությունը, այլ երկրների կրթության որակի հետ համեմատության առումով, ավելի լավ ցուցանիշ է, քան նույնիսկ ՄԿՀ հիմքում առկա՝ որակով ճշգրտված տարիների թիվը: Ասվածը հիմնավորվում է նրանով, որ ներդաշնակեցված թեստի միևնույն միավորի դեպքում սպասվող ուսումնառության տարիների ավելի մեծ թիվը մեծացնում է նաև որակով ճշգրտված տարիների թիվը: Բայց եթե աշակերտները կարողացել են ավելի բարձր միավոր ստանալ ավելի քիչ տարիների ընթացքում, նշանակում է՝ կամ այդ կրթական համակարգն է ավելի արդյունավետ, կամ տվյալ երկրի աշակերտների մտավոր կարողությունների մակարդակն է ավելի բարձր: Եթե այս տեսանկյունից դիտարկենք կրթության որակը, ապա Հայաստանն ԱՊՀ երկրներից կգերազանցի Ղրղզստանին և Մոլդովային: Առողջությանը վերաբերող ցուցանիշներով մեր երկիրն առաջ է անցել ԱՊՀ երկրների մեծ մասից (այդ թվում՝ Ադրբեջանից) և հարևան Վրաստանից: Իսկ, ընդհանուր առմամբ, Հայաստանը, ըստ ՄԿՀ-ի, ԱՊՀ երկրներից առաջ է անցել միայն Տաջիկստանից, իսկ հարևան բոլոր երկրներին զիջում է (Իրան՝ 0.59, Վրաստան՝ 0.61, Թուրքիա՝ 0,63, Ադրբեջան՝ 0,60): Ինչպես նշվում է զեկույցում, Հայաստանի 0.57 միավորը ցածր է տարածաշրջանի (Եվրոպա և Կենտրոնական Ասիա՝ 0.70), սակայն բարձր՝ իր եկամուտների խմբում ընդգրկված երկրների միջին ցուցանիշից (միջինից ցածր եկամուտներ ունեցող երկրներ՝ 0,48): Նշենք, որ 2018 թ. հուլիսի 1-ին ՀԲ-ն փոխել է Հայաստանի դասակարգումը՝ մեր երկիրը ներառելով միջինից բարձր եկամուտներ ունեցողների խմբում, և, չնայած այն հանգամանքին, որ ՄԿՀ-ն հրապարակվել է հոկտեմբերին, Հայաստանը զեկույցում ընդգրկվել է որպես միջինից ցածր եկամուտներ ունեցող երկիր, իսկ իրականը եղել է միջինից բարձր եկամուտների խումբը, որի ցուցանիշը 0.578 է՝ փոքր-ինչ ավելի, քան Հայաստանինը: Այսպիսով՝ ինչպես տարածաշրջանի, այնպես էլ եկամուտների միևնույն խմբում ընդգրկված երկրների հետ համեմատությունից պարզ է դառնում, որ Հայաստանը մարդկային կապիտալի միջինից ցածր ցուցանիշ ունեցող երկիր է, ինչի հիմնական պատճառը կրթության ցուցանիշների ցածր լինելն է: Այս ամենին զուգահեռ, այժմ արդեն COVID-19 է սպառնում կրթության որակին ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ աշխարհում: Ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալների՝ ապրիլի 2-ից աշխարհի 193 երկրում փակ են եղել մանկապարտեզները, դպրոցները և համալսարանները, ընդհանուր թվով՝ շուրջ 1.6 մլրդ սովորող չի հաճախել կրթական հաստատություններ: Այնուհետև որոշ երկրներ սկսել են աստիճանաբար վերաբացել դպրոցները, և մայիսի 5-ի դրությամբ փակ են եղել 177 երկրի կրթական հաստատություններ՝ տարածվելով շուրջ 1.3 մլրդ աշակերտի վրա[2]: Դպրոցների փակ լինելն ազդում է աշակերտների ընդհանուր զարգացածության, սոցիալականացման և սովորելու հնարավորությունների վրա՝ ավելի խորացնելով անհավասարությունը (ոչ բոլորին է հասանելի համացանցը կամ դրանից օգտվելու տեխնիկան՝ հատկապես մի քանի դպրոցական ունեցող ընտանիքներում): Երկրների մեծամասնությունը դեռ պատրաստ չէ հեռավար կրթության, և այժմ կիրառվում է մի համակարգ, որն անգամ փորձարկված չէ՝ խնդիրներ առաջացնելով թե՛ աշակերտների, թե՛ ուսուցիչների համար:

[2] https://en.unesco.org/covid19/educationresponse

Հատկանշական է, որ նման ծավալով կրթօջախների փակման հանգամանքն անանախադեպ է, և դրա ազդեցությունը դեռ երկարաժամկետում է զգացվելու: Իսկ կարճաժամկետ ազդեցությունը դեռևս արտահայտվում է միայն տնից աշխատող ծնողների արտադրողականության անկմամբ և մանկապարտեզների, դպրոցների փակ լինելու հետևանքով որոշ ծնողների կորցրած աշխատանքով: Նորվեգիայի վիճակագրական կոմիտեի հետազոտության համաձայն՝ դպրոցների (մանկապարտեզից մինչև ավագ դպրոց) մեկ օրվա փակման արժեքը յուրաքանչյուր աշակերտի համար մոտավոր գնահատվում է 173 ԱՄՆ դոլար (1809 նորվեգական կրոն): Գնահատականի հիմքում կրթության խափանման հետևանքով ապագայում վաստակելիք եկամտի նվազումն է, այսինքն՝ կանխատեսվում է, որ իրենց կրթության ընդհատման պատճառով ներկայիս դպրոցականների եկամուտը կպակասի համապատասխան չափով: Ընդ որում, ենթադրության հիմքում այն իրողությունն է, որ հեռավար կրթության պայմաններում աշակերտները ստանում են նախատեսվող գիտելիքի միայն կեսը: Ընդհանուր առմամբ, գնահատվում է, որ եթե դպրոցները փակ մնան մինչև արձակուրդ, ապա կորուստը կարժենա 7,5 մլրդ ԱՄՆ դոլար (77 մլրդ նորվեգական կրոն): Սրանում ներառված են ընդհանուր մարդկային կապիտալի մակարդակի իջեցումը և աշխատանքի առաջարկի հնարավոր կրճատումը՝ պայմանավորված դպրոցների և մանկապարտեզների փակ լինելով[3]: Ընդունված է համարել, որ ուսումնառության լրացուցիչ մեկ տարին, այլ հավասար պայմաններում, ապագայում միջինում 10%-ով բարձրացնում է տարեկան ստացվող եկամուտը[4]: Այս տեսանկյունից, դժվար չէ պատկերացնել համավարակի ազդեցությունը մարդկային կապիտալի վրա: Իհարկե, սա չի նշանակում, որ երկրներն իզուր են դպրոցները փակել կամ պետք է արդեն բացեն, ինչպես, օրինակ, վարվեցին մի շարք երկրներ: Մասնավորապես՝ Դանիայում աստիճանաբար սկսվել է դպրոցների վերաբացման գործընթացը, ինչը, սակայն, վերաբերում է տարրական կրթություն ստացողներին՝ համարելով, որ վերջիններս ռիսկային գոտում չեն և վարակի տարածման մեծ աղբյուր չեն հանդիսանում: Մի շարք արևմտյան երկրներում այս մոտեցումը գուցե արդարացված է, քանի որ ընտանիքներն առավելագույնը երկու սերնդից են բաղկացած, այսինքն՝ ընտանիքի անդամները նույնպես ռիսկային խմբում չեն: Մինչդեռ Հայաստանում այս մոտեցումը չի կարող կիրառվել՝ հաշվի առնելով ընտանիքների՝ հաճախ 3 սերնդից (ներառյալ ռիսկային գոտում գտնվող ավագ սերդի ներկայացուցիչները) բաղկացած լինելու հանգամանքը:

COVID-19-ը սպառնալիք է նաև մարդկային կյանքի համար. համավարակի հետևանքով ամբողջ աշխարհում օրեցօր ավելանում է զոհերի թիվը: Ուստի, այս տեսանկյունից ևս, դա կհանգեցնի մարդկային կապիտալի մակարդակի իջեցման, թեև ոչ այնքան, որքան կրթության որակի անկման դեպքում: Բանն այն է, որ մարդկային կապիտալում չափահասների կյանքի սպասվող տևողությունը գնահատելիս օգտագործվում է այն 15 տարեկանների տեսակարար կշիռը, որոնք, ակնկալվում է, կապրեն մինչև 60 տարին լրանալը, իսկ կորոնավիրուսի հետևանքով մահացածների միջին տարիքն ամբողջ աշխարհում բարձր է 60-ից:

Այսպիսով՝ համավարակն իր ազդեցությունն է թողնելու ողջ աշխարհի, ներառյալ Հայաստանի մարդկային կապիտալի վրա: Հաշվի առնելով, որ Հայաստանում, կրթության որակով պայմանավորված, մարդկային կապիտալի ցուցանիշն այնքան էլ

[3] Cost of school closure in the face of COVID-19, Statistics Norway, Reports 2020/15, published 15 April 2020, https://www.ssb.no/en/nasjonalregnskap-og-konjunkturer/artikler-og-publikasjoner/acosts-of-school-closure-in-the-face-of-covid-19

[4] Closing schools for COVID-19 does lifelong harm and widens inequality, The Economist, Apr 30th 2020 edition, https://www.economist.com/international/2020/04/30/closing-schools-for-covid-19-does-lifelong-harm-and-widens-inequality



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Մարդկային ներուժի զարգացման համաթիվն ԱՊՀ երկրներում

բարձր չէ, ապա կարելի է ենթադրել, որ հաջորդ տարի դա ավելի ցածր կլինի: Իսկ ինչպիսի՞ն են հայաստանաբնակների հնարավորությունները ցանկալի կյանքով ապրելու և արարելու առումով: Իհարկե, գաղտնիք չէ, որ ՀՆԱ-ն բարեկեցության չափման լավ մոտարկում չէ, ուստի մշակվել է Մարդկային ներուժի զարգացման համաթիվը՝ ընդգծելու համար, որ կարևորվում է ոչ միայն տնտեսական զարգացումը, այլև երկար և առողջ կյանքով ապրելու, արժանավայել կենսամակարդակ ունենալու և կրթություն ստանալու իրողությունները: Մարդկային ներուժի զարգացումը կարելի է բնորոշել որպես ընտրության հնարավորությունների ընդլայնմանն ուղղված գործընթաց: Իսկ դրա համար, առաջին հերթին, անհրաժեշտ է զարգացնել մարդկանց կարողությունները և մեծացնել առկա հնարավորությունները: Ամեն տարի հրապարակվող ՄՆԶՀ-ն արտահայտում է հենց այդ ամենի միջինացված պատկերը: Կամ, այլ կերպ ասած, ՄՆԶՀ-ը գնահատում է կյանքի սպասվող տևողությունը, կրթություն ստանալու հնարավորությունը (չափվում է ըստ ուսումնառության սպասվող և չափահասների ուսման տարիների միջին թվերի) և կենսամակարդակը (չափվում է ըստ գնողունակության համարժեքով ճշգրտված մեկ շնչի հաշվով ՀԱԱ-ի): Հատկանշական է, որ Հայաստանը 0.76 միավորով ընդգրկվել է մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակ ունեցող երկրների շարքում՝ զբաղեցնելով 81-րդ հորիզոնականը[5]: Ընդ որում, նախորդ տարվա համեմատ իր դիրքը բարելավելով 2 տեղով և առաջ անցնելով հարևան Ադրբեջանից (0.75), ՀՀ-ն դեռևս հետ է մնում իր մյուս հարևաններից՝ Թուրքիայից (0.8), Իրանից (0.79) և Վրաստանից (0.78):

ԱՊՀ երկրների շարքում, ի տարբերություն ՄԿՀ-ի, ՄՆԶՀ-ի միջինից (0.74) բարձր ցուցանիշ ունենք՝ զբաղեցնելով 4-րդ հորիզոնականը: Ուսման սպասվող տևողությունը և չափահասների ուսման տարիների միջին թիվն աճել են՝ կազմելով համապատասխանաբար 13.2 և 11.8 տարի: Կարևոր է ընդգծել, որ կյանքի սպասվող տևողությունը ևս Հայաստանում բավական աճել է (2018 թ.՝ 74.9 տարի, ինչը 2010 թ. համեմատ ավելի է 2.5, իսկ 1990 թ. համեմատ՝ 7 տարով): Սակայն, COVID-19-ն ամբողջ աշխարհում կհանգեցնի կյանքի սպասվող տևողության անկման, քանի որ այն ուղղակիորեն կապված է մահացության ցուցանիշի հետ: Հետևաբար՝ կարելի է ենթադրել, որ ՄՆԶԻ-ն ամբողջ աշխարհում և հատկապես այն երկրներում, որտեղ զոհերի թիվը մեծ է, նույնպես կնվազի:

[5] http://hdr.undp.org/en/countries/profiles/ARM

Ամփոփելով նշենք, որ մարդկային կապիտալում կատարվող ներդրումները, մեղմ ասած, չեն բավարարում մրցունակ երկրի պահանջներին: Կրթական համակարգի խնդիրները սկիզբ են առնում հենց դպրոցական համակարգից, որտեղ կրթության տարիներ-որակ հարաբերակցությունը չափազանց մտահոգիչ է: Հայաստանի գերխնդիրը պետք է լինի դպրոցական կրթության՝ որպես ուսման մյուս փուլերի հիմքի որակի վերանայումը: Որքան էլ ցավալի է, սակայն համավարակը խորացնելու է արդեն իսկ եղած խնդիրները, ուստի ամբողջ աշխարհում մարդկային կապիտալի և մարդկային ներուժի զարգացման անկումն անխուսափելի է: Իսկ թե որքան ցավոտ կլինի այդ անկումը յուրաքանչյուր երկրի համար, կախված է տվյալ երկրի՝ համավարակի դեմ մղվող պայքարի արդյունավետության աստիճանից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. The Human Capital Project, International Bank for Reconstruction and Development, The World Bank, 2018.
2. Human Developmen Report 2019, UNDP, New York, 2019.
3. Methodology for a World Bank Human Capital Index, Aart Kraay, Policy Research Working Paper 8593, World Bank Group, Development Economics, Development Research Group, 2018 September.
4. Cost of school closure in the face of COVID-19, Statistics Norway, Reports 2020/15, published 15 April 2020.
5. Closing schools for COVID-19 does lifelong harm and widens inequality, The Economist, Apr 30th 2020 edition.
6. http://hdr.undp.org/en/content/2019-human-development-index-ranking
7. http://hdr.undp.org/sites/default/files/hdr2019_technical_notes.pdf
8. https://en.unesco.org/covid19/educationresponse

Рузанна ТАДЕВОСЯН
Младший исследователь исследовательского центра "Амберд", АГЭУ, аспирант

ТРАЕКТОРИЯ ПАНДЕМИИ

ЧЕЛОВЕЧЕСКИЙ КАПИТАЛ, ЧЕЛОВЕЧЕСКИЙ ПОТЕНЦИАЛ И ПАНДЕМИЯ

Аналитическая статья посвящена изучению и анализу человеческого капитала и человеческого потенциала Армении. В этих целях были проанализированы индексы развития человеческого капитала и человеческого потенциала с соответствующими компонентами. Было проведено сравнение между Арменией, другими странами СНГ и соседними странами. В Армении особенно отрицательное влияние на человеческий капитал оказало низкое качество школьного образования. К сожалению, пандемия усугубит существующие проблемы, в результате чего произойдет спад в развитии человеческого капитала и человеческого потенциала во всем мире. Степень спада в каждой конкретной стране будет зависеть от эффективности борьбы с пандемией.

Ключевые слова: *человеческий капитал, потенциал, индекс, COVID-19, воздействие*

Ruzanna TADEVOSYAN
Junior researcher at "Amberd" research center, ASUE, PhD student

PANDEMIC TRAJECTORY

HUMAN CAPITAL, HUMAN POTENTIAL AND PANDEMIC

The paper is devoted to Armenia's human capital and human development research and analysis. To this end, the human capital index and human development index with their components have been analyzed. A comparison has been made among Armenia, the other CIS, and neighboring countries. The low quality of school education has had a negative impact on human capital in Armenia. Unfortunately, the pandemic will deepen the existing problems resulting in human capital and human development decline throughout the world. And the extent of the decline in every country will depend on the country's effectiveness to fight against coronavirus.

Keywords: *human capital, potential, index, COVID-19, impact*